

ՍԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄ ԳՐՈՂԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ
ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայերեն բանավոր խոսքն ավելի հարուստ է, քան գրավորը, ուստի վերջինիս ոչ բոլոր իրողություններն են, որ հաղորդակցական առումով ունեն մշակութային կարևորություն: Հայտնի է, որ գրավոր խոսքի բաղադրիչներից ավելի շատ փոփոխվում է բառապաշարը, որովհետև իրականության մեջ տեղի ունեցող գրեթե ամեն մի տեղաշարժ իր անմիջական արտացոլումն է գտնում բառապաշարի մեջ:

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի բառապաշարի պատմությունն ուսումնասիրվում է ամենից առաջ ավանդված գրական հուշարձանների, ինչպես նաև դրանց տվյալների մեկտեղումը հանդիսացող բառարանների հիման վրա:

Գրավոր լեզուն ավելի հարուստ է, քան նրա գրական տարբերակը, որովհետև եթե առաջինը կարող է լինել ինքնաբերաբար, ապա երկրորդը մշակվում է գործառական որոշակի ոճերի նկատառումով, մեծ գրողների խոսքի օրինակով:

Վերջիններիս մեջ գերակշիռ դեր ունի գեղարվեստական ոճը, որը գրական լեզվի մշակման ու կանոնարկման մայրուղին է: Հայերենը զարգացման տարբեր շրջաններում, ինքնուրույն զարգացման ընթացքում կամ արտաքին միջամտության պայմաններում մշակվել է գրական որոշակի նորմային համապատասխան: Դրանում մեծ է եղել ամենից առաջ գեղարվեստական գրականության, այնուհետև մտավոր մշակույթի մյուս բնագավառների մեծ անհատների խոսքային գործունեության դերը:

Հայերենը, ինչպես ամեն մի զարգացած գրական լեզու, աչքի է ընկնում ոճական որոշակի տարբերակվածությամբ: Նրա թե հին և թե նոր գրական տարբերակը կրում են խոսքի մեծ անհատների ոճի կնիքը, և վերջինիս ուսումնասիրությամբ զբաղվում է ոճաբանությունը, որը լեզվաբանական գիտության ինքնուրույն բնագավառ է: Հայոց լեզվի ոճերի ուսումնասիրությանը նվիրած աշխատություններում քննվել են ոչ միայն տարբեր հեղինակների, այլև այս կամ այն գործառական ոճի մեջ մտնող առանձին երկերի առանձնահատկությունները: Այս առումով նշելի են հատկապես այն աշխատությունները, որոնց հեղինակներն անդրադարձել են հայ հին և նոր գրականության դասականների լեզվին և ոճին:

Հրապարակվել են նաև ոճագիտությանը նվիրված տեսական ուսումնասիրություններ և ուսումնական ձեռնարկներ²:

Հայոց լեզվի հին և նոր բառապաշարն ի մի է բերված տարբեր բնույթի և ծավալի բառարաններում, որոնք ստեղծվել են թե նախկինում և թե նոր ժամանակներում: Կազմվել են նաև հայ հին մատենագրության հայտնի ներկայացուցիչների (Կորյուն, Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Բուզանդ, Խորենացի, Եղիշե, Փարպեցի, Դավիթ Անհաղթ և ուրիշներ), այլև նոր շրջանի որոշ գրող-

ների (Ավ. Իսահակյան, Դ. Վարուժան և այլն) կարևորագույն երկերի համաբարբառները: Դրանց օգնությամբ հնարավոր է որոշակի պատկերացում ունենալ հայոց լեզվի բառապաշարի ոչ միայն առանձին շերտերի, այլև ոճական տարբերակվածության նասին: Այսպես բառապաշարի գրեթե յուրաքանչյուր միավոր ի հայտ է գալիս իր ժամանակի մեջ, բառակազմական և իմաստաբանական առանձնահատկություններով, ոճական հագեցվածությամբ և այլն: Օրինակ՝ բառարանների միջոցով իմանում ենք, որ այս կամ այն բառը գործածվել է այսինչ կամ այնինչ դարում, ոչ այլ, քան տվյալ հեղինակի կոնկրետ երկում, որովհետև բառարաններում բառային միավորները՝ առանձին բառեր, դարձվածային միավորներ, բառակապակցություններ, բառերի տարբեր կարգի իմաստներ, ոճեր և այլն, հիմնավորված են լինում բնագրային վկայություններով, ինչպես նաև նշվում են, թե որ հեղինակի ինչ երկից և վերջինիս որ էջից են քաղված այդ վկայությունները և այլն:

Հայ նոր գրականության բառապաշարի տվյալների հիման վրա կազմվել են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացառական բառարանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցների հեղինակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», որոնք հիմնականում ամբողջական պատկերացում են տալիս այս կամ այն գրողի լեզվի բառապաշարի, վերջինիս իմաստային և ոճական հարստության և բազմազանության վերաբերյալ:

Այդուհանդերձ, հատկապես վերջին տարիներին բավականին մեծ թվով աշխատանքներ են նվիրվում նոր և նորագույն շրջանի գրողների լեզվի, ընդ որում երբեմն նաև ոճի առանձին ուսումնասիրությանը: Այսպես գրվել են մեծագործություններ և ատենախոսություններ, վերջիններին հարող գիտական հոդվածներ, կարդացվել են տվյալ թեմային առնչվող գիտական զեկուցումներ և այլն: Դրանցում մանրամասն քննվել են բառապաշարի լեզվաոճական առանձնահատկությունները, որն էլ մեծ մասամբ լրացնում է բառարանների բացթողածը, վերացնում թերացումը և անում կարևոր ճշգրտումներ:

Այսպես հայտնի օրինակ է, որ *Ժիժաղախիտ* բառը, ըստ գրաբարի և նոր հայերենի բառարանների տվյալների, առաջին անգամ գործածել է Նարեկացին իր մի տաղում, նոր ժամանակներում՝ Թումանյանը, այնուհետև Վրթ. Փափագյանը, Մ. Մարգարյանը և ուրիշներ: Ընդ որում թեմայի և գրական երևույթի միջավայրի առումով Նարեկացու կերտած բառին դիմելը «Ախթամար» լեզենդում լիովին հասկանալի է, ավելին՝ ոճական հակումով տպավորիչ: Նարեկացու և Թումանյանի համապատասխան երկերի բառապաշարի բառարանագրման հետևանքով պատկերացում ենք կազմում այդ բառի պատմության վերաբերյալ: Ավելին թերևս եղել են Նարեկացու այդ բառի գործածողներ մինչև Թումանյանը: Եղած բառարանների տվյալներով հնարավոր չէ դա պարզել: Իսկ այդ երկու հեղինակների միջև ընկած է մի տևական ժամանակ, երբ հնարավոր էր, որ որևէ հեղինակ գործածելիս լիներ *Ժիժաղախիտ* բառը, և այն իրոք գործածվել է 18-րդ դ. ոչ այնքան հայտնի հեղինակի մի ձեռագիր երկում: Եվ քանի որ հայերեն գրական հուշարձաններն ավելին են, քան բառարաններում տեղ գտածները, ուստի բնական է, որ շատ բառեր պիտի դուրս մնային անգամ անենածավալուն բառարաններից:

Հայ գրականության դասական հեղինակների բառապաշարի շատ միավորներ երբեմն դուրս են մնացել ժամանակակից հայերենի ամենածավալուն բարարաններից: Այսպես, օրինակ, Ավ. Բակունցի երկերում գործածվել են մի քանի տասնյակից ավելի բառեր, որոնք չենք գտնում ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում, ընդ որում ոչ այն պատճառով, որ դրանք գրական ձևեր չեն: Ընդհակառակն՝ ոչ միայն այդպիսին են, այլև Բակունցի լեզվի նորաբանություններից են, և որպես այդպիսին՝ բնության առարկա չեն եղել անգամ մեծ գրողի լեզվին նվիրված աշխատության մեջ¹: Ավելին քիչ չեն դեպքերը, որոնցում այս կամ այն բառը նույն բացատրական բառարանում վկայակոչվում է հետագա հեղինակների տվյալներով, մանավանդ Ս. Խանգադյանի, Գ. Սևունցի և այլն: Ավելացնենք, որ նման բացթողում նկատելի է նաև որոշ բառերի իմաստային կիրառության առաջնության պարզաբանման հարցում:

Լեզուն հաղորդակցման միջոց է, որ ունենում է կոնկրետ դրսևորում խոսքի մեջ, ընդ որում այս կամ այն կարգի ոճավորմամբ: Գեղարվեստական խոսքի բառապաշարի ոճական ուսումնասիրությունն ունի մեծ կարևորություն հեղինակային լեզվի առանձնահատկությունների վերլուծության համար:

Ուստի գրողի լեզվի բառապաշարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ոչ միայն առհասարակ, այլև հատկապես հայերենի ընդհանուր բառապաշարի պատմության, գործառական-ոճական տարբերությունների բնութագրման նպատակով: Գրողի լեզվի բառապաշարի մեջ որոշակի տեղ ունեն հեղինակային բառերը, որոնք այլ բան չեն, քան անհատական ոճի դրսևորման արդյունք: Հեղինակային բառերի առանձին և մանրամասն բնությունն իր կարևորությունն ունի տվյալ հանրության ընդհանուր հաղորդակցական միջոցի թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա ուսումնասիրություն համար: Այս դեպքում, կարելի է ասել, համատեղելի են ընդհանուր բառագիտական-բառարանագրական և առանձին գրողի լեզվի բառապաշարի, ավելի կոնկրետ՝ հեղինակային բառերի առանձնացմանն ու վերլուծությանը նվիրված աշխատանքները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տես, օրինակ, Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1978: Նույնը, Այնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1978: Նույնը, Հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1978 և այլն:
- ² Գ. Բ. Տահուկյան, Ֆ. Հ. Խլիպայան, Հայոց լեզու, ընդհանուր գիտելիքներ, ոճաբանություն, Երևան, 1976: Ս. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000: Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան, 2006 և այլն:
- ³ Տես Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965:

С. В. Амбарцумян

НЕКОТОРЫЕ ЗАМЕЧАНИЯ О ЛЕКСИКЕ И АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ ПИСАТЕЛЯ

Армянский язык содержит не только общую, но и авторскую лексику, которая выделяется определенными стилистическими оттенками. Они составляют неотъемлемую часть словарного состава армянского языка как древнего, так и нового периода.

Стилистический анализ авторской лексики и выявление соответствующих неологизмов способствуют полноте толковых и других словарей данного языка.

S. V. Hambardzumyan

SOME VIEWS ABOUT THE VOCABULARY AND THE AUTHOR'S LEXICON

The Armenian language contains not only common words but also elements of the vocabulary specific to certain author. Those elements have definite stylistic features and make the indivisible part of both old and modern Armenian vocabulary.

The stylistic analysis of the author's lexicon and the detection of corresponding innovations contribute the expansion of different dictionaries of the language.

The solution of that kind of problems is significant for the history of the development of the Armenian literary language.